ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 128 - Ա

17 հուլիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6.1-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. հուլիսի 7 -ի
N 128 -Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց.մրցույթների ժամանակացույց

1.«Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 11^{00} -ին
2.«Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 15^{00} –ին
3..«Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը՝ 11^{00} -ին
4.«Լիճքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը՝ 15^{00} -ին
5.«Մեծ Մասրիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 11^{00} -ին
6.«Ակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 15^{00} -ին
7 «Վերին Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2017 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 11^{00} -ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԽԼՂԱԹՅԱՆ